Կարգապահական գործ թիվ ԿԳ-16214

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մայիսի 18-ի թիվ 80-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/53-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Արա Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Տիգրան Խուրշուդյանի և Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահանգ Մարտիրոսյանին (արտոնագիր թիվ 1486) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դիմող)** նախկին դատավոր Յուրի Բաղդասարյանը 20.09.2016թ. գրություն է ուղարկել ՀՀ ՓՊ նախագահ պարոն Արա Զոհրաբյանին այն մասին, որ փաստաբան Յուրի Մարտիրոսյանը դատական նիստում ինքնաբացարկ է հայտնել դատավոր Յուրի Բաղդասարյանին, որից հետո դատավորը հեռացել է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու համար, որից հետո փաստաբան Վահագն Մարտիրոսյանը դատարանի գրասենյակ միջնորդություն է ներկայացրել նույն օրը մեկ այլ դատարանում դատական նիստի մասնակցելու պատճառաբանությամբ և հեռացել է, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն փաստաբանը անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ և խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը: Տեղեկացրել է, որ վերը նշվածի հիմքով փաստաբանի նկատմամբ կայացրել է որոշում դատական սանկցիայի ենթարկելու մասին և խնդրել է ենթարկել

կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

2016թ. հոկտեմբերի 25-ին Պալատի նախագահը կայացրել է թիվ 442-Ա/ԿԳ-16214 որոշումը **(այսուհետև՝ Որոշում)** կարգապահական վարույթ հարուցելու մասին: Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 7-րդ մասի 2-րդ պարբերության համակցությամբ, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հիմքով կայացված դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը Պալատի կողմից կարգապահական վարույթ հարուցելու և՛ առիթ է, և՛ հիմք:

Որոշումը կայացվել է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 4.1 կետի հիմքով, որի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Որոշումը կայացվել է դատարանի կողմից դատական սանկցիայի կիրառելու մասին որոշման մեջ նշված փաստերը ստուգելու նպատակով:

Կարգապահական գործը 31.10.2016թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Անժելա Հոբոսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Ըստ Դիմողի կողմից կայացված դատական սանկցիայի մասին որոշման, 20.09.2016թ. ժամը 14:00-ին նշանակված դատական նիստին փաստաբան Վ. Մարտիրոսյանը դատավորին ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել, դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու և հայտարարել է, որ որոշումը կհրապարակի 20.09.2016թ-ին, ժամը 17:30-ին:

Նշված ժամին դատարանը հրապարակել է միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը, որով մերժել է պաշտպանի միջնորդությունը և շարունակել է դատական նիստը: Մինչդեռ, մեղադրյալի շահերի պաշտպան փաստաբան Վ. Մարտիրոսյանը բացակայել է դատական նիստից, իսկ մինչ դատարանի դահլիճը լքելը միջնորդություն է ներկայացրել դատարանի գրասենյակ այն մասին, որ նույն օրը ժամը 16:00-ին ունի մեկ այլ դատական նիստ և պարտավոր է ներկայանալ այդ նիստին, ուստի հնարավորություն չունի մնալ դատական նիստին մինչև 17:30-ը և խնդրել է նիստը հետաձգել ու նշանակել մեկ այլ օր:

Նման հանգամանքներում դատարանը գտել է, որ պաշտպանի կողմից որոշման հրապարակմանը ու դատական նիստին չմասնակցելը դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի, դատական նիստը խոչընդոտելու, դատավարական իրավունքներից անբարեխիղճ օգտվելու դրսևորումներ են և նման պարագայում որոշել է նրա նկատմամբ կիրառել դատական սանկցիա և դիմել ՀՀ

փաստաբանների պալատ կարգապահական վարույթ հարուցելու խնդրանքով: Ինչ վերաբերում է պաշտպանի միջնորդությանը մեկ այլ դատական նիստին մասնակցելու անհրաժեշտության պատճառաբանությամբ, այդ առումով դատարանը գտել է, որ փաստաբանը վաղօրոք տեղեկացված է եղել այդ դատական նիստի տեղի, օրվա և ժամի մասին և նա պարտավոր էր միջոցներ ձեռնարկել դատական նիստին մինչև վերջ մասնակցելու համար:

Դատարանը նաև նշել է, որ փաստաբանը նույն քրեական գործով նախորդ դատական նիստերին նույնպես թույլ է տվել անհարգալից վերաբերմունք, իր իրավունքներից օգտվել է անբարեխիղճ կերպով, որոնք արտահայտվել են մի շարք դատական նիստերին տարբեր պատճառաբանություններով չներկայանալով, որի արդյունքում խախտվել է ոչ միայն դատական քննության բնականոն ընթացքը, այլ նաև դատական քննության ողջամիտ ժամկետները:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Խորհրդի նիստում պատասխանող Վահագն Մարտիրոսյանը նշել է, որ նախորոք չէր կարող կանխատեսել, որ դատական քննության ընթացքում ի հայտ է գալու դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտություն, ինչպես նաև, որ նման միջնորդություն ներկայացնելու դեպքում դատավորը միջնորդության վերաբերյալ որոշում էր կայացնելու ոչ թե անհապաղ, ողջամիտ ժամկետի ընթացքում, այլ մի քանի ժամ հետո, որի հանգամանքը, այն պահին, երբ ներկայացրեց միջնորդություն, իր համար անսպասելի էր: Նա նշել է, որ դատական քննության է գնացել ժամը 14:00-ին և վստահ էր, որ մինչ հաջորդ դատական նիստը դատարանը կավարտեր դատական նիստը, սակայն իր համար անսպասելի էր, որ դատարանը միջնորդության վերաբերյայլ որոշման հրապարակումը հետաձգեց մինչև 17:30-ը: Նման անսպասելի որոշման արդյունքում իր նախորոք ծրագրված օրակարգը խափանվեց, և, հաշվի առնելով, որ ժամը 16:00-ին նշանակված դատական նիստը կայանալու էր Եղվարդ քաղաքում, որտեղ հասնելու համար կպահանջվեր ավելի երկար ժամանակ, քան սովորական պայմաններում, ինքը ստիպված էր հեռանալ դատարանի դահլիճից, որպեսզի հասցներ մասնակցել մյուս դատական նիստին: Եթե դատարանը միջնորդությանը անդրադառնար անհապաղ, այլ ոչ թե ավելի քան երկու ժամ հետո, այդ դեպքում ինքը կշարունակեր մասնակցել դատական քննությանը: Հետևաբար, հանգամանքները իր ցանկությունից և վերահսկողութունից վեր էին, որպեսզի կարողանար որևէ կերպ շտկել իրավիճակը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Կարգապահական վարույթին վկաներ չեն հրավիրվել կամ այլ կերպ մասնակցել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

31.10.2016թ. կարգապահական գործը հանձնվել է Անժելա Հոբոսյանին՝

կարգապահական գործ նախապատրաստելու նպատակով: 09.11.2016թ. Անժելա Հոբոսյանը պատվիրված նամակով դատավոր Յուրի Բաղդասարյանին պարզաբանել է նրա իրավունքները կարգապահական վարույթի շրջանակներում, մասնավորապես, որ նա իրավունք ունի ներկայացնել բացատրություն, միջնորդություններ և ապացույցներ: Դատավոր Յուրի Բաղդասարյանը (այսուհետ՝ Դիմող) բացատրություն, միջնորդություն կամ ապացույցներ չի ներկայացրել: 09.11.2016թ. Անժելա Հոբոսյանը պատվիրված նամակով փաստաբան Վահագն Մարտիրոսյանին տեղեկացրել է կարգապահական վարույթի շրջանակներում իր իրավունքների մասին, մասնավորապես, որ նա իրավունք ունի ներկայացնել բացատրություններ, միջնորդություններ և ապացույցներ: Պատասխանող Վահագն Մարտիրոսյանը միջնորդություններ, բացատրություններ կամ ապացույցներ չի ներկայացրել: Վարույթի շրջանակներում այլ ապացույցներ ձեռք չեն բերվել:

Կարգապահական գործը նախապատրաստող անձը, ուսումնասիրելով գործի նյութերը, կազմել է Եզրակացություն, որի երկու օրինակ 27.12.2016թ. ուղարկել է դատական սանկցիա կիրառելու մասին որոշում ընդունած դատավոր Յուրի Բաղդասարյանին և պատասխանող փաստաբանին, և նույն օրը կարգապահական գործը հանձնել է Փաստաբանների պալատին:

Եզրակացության համաձայն, դատարանը որոշման հրապարակման ժամ է նշանակել աշխատանքային օրվա գրեթե ավարտին, որով դատավարության մասնակիցների համար ստեղծել է անբարենպաստ սպասման վիճակ: Եզրակացությունը պատրաստած անձը գտել է, որ փաստաբան Վահանգ Մարտիրոսյանը դատարան ներկայանալուց չարամտորեն չի խուսափել, դատավարական իրավունքներից անբարեխիղճ կերպով չի օգտվել, իր դատավարական պարտականությունները կատարել է պատշաճ, մինչև դատարանի դահլիճը լքելը միջնորդություն է ներկայացրել և հայտնել, որ ժամը 16:00-ին անհրաժեշտություն ունի մասնակցել մեկ այլ դատական նիստի և այս հանգամանքով փաստվում է փաստաբանի հարգալից վերաբերմունքը դատարանի նկատմամբ: Ավելին, փաստաբանը գործել է բարեխղճորեն, որպեսզի ապահովի մեկ այլ դատական նիստի բնականոն ընթացքը: Եզրակացրել է, որ Դիմողի ներկայացրած հիմնավորումները չեն հաստատում, որ պատասխանող Վահագն Մարտիրոսյանը կատարել է արարք, որը համապատասխանում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետին:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Փաստաբան Վահագն Մարտիրոսյանը ներգրավված է եղել որպես պաշտպան թիվ ԿԴէ/0108/01/14 դատական գործում, որը քննվում էր Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:
- 20.09.2016թ. դատաքննության ժամանակ ժամը 14:00-ին փաստաբան Վ. Մարտիրոսյանը դատավորին ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել:
- Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու և հայտարարել է, որ որոշումը կհրապարակի նույն օրը ժամը 17:30-ին:
- Ժամը 14:30-ին Վահագն Մարտիրոսյանը լքել է դատարանի դահլիճը ժամը 16:00-ին նշանակված մեկ այլ դատական նիստին մասնակցելու համար:
- Ժամը 16-ին նշանակված դատական նիստը կայանալու էր Եղվարդ քաղաքի Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Այդ դատական նիստի օրվա և ժամի մասին որոշում կայացրել է դատարանը, որի մասին փաստաբանը տեղեկացվել է փոստով ստացված ծանուցագրով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 17.05.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Վահագն Մարտիրոսյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012թ-ից: 2012-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ), որոնք կարճվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է կարճել կարգապահական վարույթը, քանի որ փաստաբանը չի կատարել Փաստաբանի վարքագծի կանոնակարգի 4.1 կետով սահմանված վարքագծի խախտում:

Խորհուրդը գտնում է, որ 20.09.2016թ. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցած դատաքննության ընթացքում ձևավորվել են հանգամանքներ, որոնք փաստաբան Վահագն Մարտիրոսյանը չէր կարող կանխատեսել այն պահի դրությամբ, երբ որոշում կայացվեց Եղվարդ քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում նշանակել դատական նիստ ժամը 16:00-ին: Այդ դատական նիստը նշանակված է եղել ավելի վաղ, դրա մասին փաստաբանը տեղեկացվել է ծանուցմամբ, հետևաբար փաստաբանը իր կամքից անկախ հանգամանքների պատճառով հայտնվել էր մի իրավիճակում, որի պայմաններում երկու դատական նիստերի միջև ժամանակահատվածը կարճ էր և

նա ողջամտորեն չէր կարող կանխատեսել, որ երկրորդ դատական նիստում կծագեր ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտություն, որի առնչությամբ դատավորը որոշում կկայացներ իր որոշումը հրապարակել նկատելի հապաղումով: Նման հանգամանքներում փաստաբանը որոշել է ներկայացնել միջնորդություն, որում շարադրել է ձևավորված հանգամանքները, և խնդրել է նիստը հետաձգել ու նշանակել մեկ այլ օր, որից հետո ստիպված է եղել լքել դատական նիստերի դահլիճը մեկ այլ դատական նիստին մասնակցելու համար, որը նշանակված է եղել ավելի վաղ:

Հետևաբար, փաստաբանը գործել է ողջամտության շրջանակներում ոչինչ չի հուշում, որ նա ունեցել է դիտավորություն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել դատարանի նկատմամբ կամ իր արարքով խոչընդոտել դատական քննության ընթացքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 442-Ա/ԿԳ-16214 որոշմամբ փաստաբան Վահագն Մարտիրոսյանի (արտոնագիր թիվ 1486) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:***

2. *Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:*

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Արա Ղազարյան